



ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijewan.y-su.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-16-13-93

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(2017-2018 թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան

«06» դեկտեմբերի 2017թ.

Հ/Հ	Միջոցառման բնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Կինոդիտում	«BBC: Մաթեմատիկայի պատմություն» 4 մասով	հոկտեմբերի 10, 11, 17	Բնական գիտությունների ֆակուլտետի 10 ուսանողներ դիտեցին մաթեմատիկայի պատմության մասին պատմող 4 մասանի ֆիլմը, որից հետո տեղի ունեցան քննարկումներ:
2.	Կինոդիտում	«Հռոմից ավելի հին մայրաքաղաքը»	հոկտեմբերի 17	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 12 ուսանողներ դիտեցին Երևան քաղաքի մասին փաստավավերագրական ֆիլմ:
3.	Բաց դաս	«Նորայր Դանիելյան: Լեզենդար հրամանատարը» Բանախոս՝ Ս.Ալավերդյան «Տավուշ» ՌՀԱ-ի հետ համատեղ	հոկտեմբերի 18	ՈՒԳԸ համակարգող, Ընդհանուր մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դասախոս Սլավիկ Ալավերդյանը ներկայացրեց Մարտակերտի Պաշտպանական շրջանի հիմնադիր-հրամանատար Նորայր Դանիելյանի կյանքը և գործունեությունը, ցուցադրվեց հարցազրույցներից մեկի տեսագրությունը:
4.	Կինոդիտում	«Չարենց. Մի ճրագ մթում» «Հինգշաբթի» գրական-գեղարվեստական ակումբի հետ համատեղ	հոկտեմբերի 19	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 15 ուսանողներ դիտեցին Եղիշե Չարենցի մասին ֆիլմը, տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցում էին Բ.Գ.Թ., դոցենտ Խ.Վարդայանը և Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Հասանյանը
5.	Ճանաչողական այց, քննարկում	«Զբոսաշրջության զարգացման հնարավորությունները Տավուշի մարզում» ԵՊՀ ԱԵՑ ՈՒԳԸ-ի հետ համատեղ	հոկտեմբերի 21	ԵՊՀ շուրջ 30 ուսանողներ՝ դասախոսներ Ս.Սուվարյանի, Գ.Հովհաննիսյանի, Գ.Ալեքսանյանի ուղեկցությամբ ժամանել են մասնաճյուղ, մասնաճյուղի 30 ուսանողների և մի շարք դասախոսների հետ տեղի է ունեցել սեմինար-քննարկում:
6.	Ինտելեկտուալ խաղ	«Ինտելեկտ 2017»	հոկտեմբերի 25	Բնական գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետների 4 թիմերի համար կայացել է ինտելեկտուալ խաղ, հաղթող թիմը պարգևատրվել է պատվոգրով և «Այլ կերպ» խաղով:

7.	Սեմինար	«Ինչպես գրել գիտական զեկույց և կուրսային աշխատանք». սեմինարավար՝ Ս.Ալավերդյան	նոյեմբերի 8	Սեմինարը վարում էր ՌԻԳԸ համակարգող, Ընդհանուր մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դասախոս Սլավիկ Ալավերդյանը: Սեմինարավարը ներկայացրեց գիտական հետազոտության ընթացքը, այնուհետև տրվեցին որոշ հասկացությունների բացատրություններ, թվարկվեցին հետազոտության մեթոդները, գիտահետազոտական աշխատանքների տեսակները, դրանց կառուցվածքը: Հանգամանորեն ներկայացվեց աղբյուրներից օգտվելու և հղումներ կատարելու կարգը և նշանակությունը: Բացատրվեցին նաև համացանցում արդյունավետ որոնման նրբությունները և գիտական գրականություն պարունակող հիմնարար կայքերը:
8.	Դասընթաց	«Բիզնես պլանավորում» սեմինարավար՝ Ա.Զուրաբյան ԵՂՂ ԻՄ ՈՒԽ-ի, Տավուշի մարզի Գյուղական տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի հետ համատեղ	նոյեմբերի 14-17	Մասնաճյուղի 15 ուսանողների և շրջանավարտների համար կայացավ բիզնես դասընթաց, որի սեմինարավարներից մեկը ՌԻԳԸ նախկին նախագահ Ալբերտ Զուրաբյանն էր:
9.	Ինտելեկտուալ խաղ	Թիմային ինտելեկտուալ խաղի մասնաճյուղային առաջնություն ԵՂՂ ԻՄ ՈՒԽ-ի հետ համատեղ	նոյեմբերի 14- դեկտեմբերի 12	Մասնաճյուղի 4 ֆակուլտետներում կայացել են խաղեր, որոնց հաղթող թիմերի համար դեկտեմբերի 12-ին կկայանա եզրափակիչ խաղ: Հաղթող թիմը կստանա պատվոգիր և փոխանցիկ գավաթ:
10.	Մասնաճյուղային ուսանողական գիտաժողով	Նվիրվում է ԵՂՂ ԻՄ ՌԻԳԸ հիմնադրման 15-ամյակին	նոյեմբերի 29	Մասնաճյուղի 3 ֆակուլտետներից գիտաժողովին մասնակցեցին 15 ուսանողներ: Տեղի ունեցավ հանդիսավոր բացում և լիագումար նիստ, ապա աշխատանքները շարունակվեցին ֆակուլտետային բաժանմունքներում: Մասնակիցներին տրվեցին հավաստագրեր:
11.	Գիտահանրամատչելի զեկուցում	«Հին Եգիպտոսի մշակույթը» բանախոսներ՝ Հ.Ղարաբյոզյան և Տ.Թիրաբյան	նոյեմբերի 30	Ներկայացվեց Հին Եգիպտոսի արվեստի և գրերի մասին հետաքրքիր տեղեկություններ, Քեոփսի բուրգի առեղծվածային պատմությունը, Հին Եգիպտոսի մշակույթը, նրա զարգացման պատմական փուլերը, Ալեքսանդրիայի գրադարանի պատմությունը և նրա առեղծվածային կործանման վարկածներից մի քանիսը: Տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցում էր քաղ.գ.թ., ասիստենտ Հ.Մովսեսյանը:

12.	Գիտահանրամատչելի զեկուցում	«Ինչպես գումար վաստակել համացանցում» բանախոս՝ Հ.Ղարագյոզյան, Ջ. Մնացականյան	դեկտեմբերի 5	Ներկայացվեցին համացանցում գումար վաստակելու մի քանի պարզագույն եղանակներ արտարժույթի շուկաների և տարբեր կայքերի միջոցով: Ներկա էին տարբեր ֆակուլտետների 10 ուսանողներ:
13.	Կինոդիտում, քննարկում	«Երկրաշարժ» ԵՊՀ ԻՄ ՈՒՆ-ի հետ համատեղ	դեկտեմբերի 7	Յուցադրվել է 2016թ. “Землетрясение” ֆիլմը: Ներկա էին տարբեր ֆակուլտետների 20 ուսանողներ:
14.	Ինտելեկտուալ խաղ	Տնտեսագիտական տերմիններով ինտելեկտուալ խաղ	դեկտեմբերի 16	Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար անցկացվեց յուրօրինակ ինտելեկտուալ խաղ: Մասնակցեցին 4 հոգուց բաղկացած 3 թիմ: Հաղթող ճանաչվեց «Ինվեստ» թիմը:
15.	Գիտահանրամատչելի դասախոսություն	«Տավուշ՝ պատմության հետքերով» բանախոսներ՝ Ա.Օրդնիյան, Ջ.Մնացականյան	դեկտեմբերի 21	Բնական գիտությունների ֆակուլտետում տեղի ունեցավ գիտահանրամատչելի զեկուցում, ներկայացրվեց հետաքրքիր տեղեկություններ և պատմական ակնարկներ Տավուշ աշխարհի գողտրիկ անկյունների մասին: Նշվեցին Տավուշի բերդերի, ամրոցների, եկեղեցիների (Աշոտ Երկաթի բերդ, Աղջկա կամ Կայան բերդ, Օկոնի ամրոց, Սրվելի վանական համալիր, Մբ. Աստվածածնի, Մորձորի վանք և այլն) հետ կապված ավանդություններ և ավանդապատումներ: Ներկա էին ֆակուլտետի 20 ուսանողներ:

Մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահ՝
քարտուղար՝

Հ.Ղարագյոզյան
Ջ.Մնացականյան